

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏՐԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26-Ը ՀՈՒՆԻՍԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏՐԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ, ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՇՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ,  
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԴԻՄԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը  
«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի  
ընդհանուր ժողովը ո թ ո շ ու մ է՝

1. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2003թվականի հաշվետվությունը  
համաձայն հավելված 1-ի /կցվում է/:

2. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2003թվականի տարեկան հաշվեկշիռը  
2004թվականի հունվարի 1-ի դրությամբ համաձայն հավելված 2-ի /կցվում է/:

3. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2003թվականի ֆինանսատնտեսական  
գործունեության արդյունքում ձևավորված շահույթների և կրած վնասների հաշիվները  
2004թվականի հունվարի 1-ի դրությամբ համաձայն հավելված 3-ի /կցվում է/:

4. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2003թվականի ֆինանսատնտեսական  
գործունեության արդյունքում ստացված շահույթների ու կրած վնասների բաշխումը  
համաձայն հավելված 4-ի /կցվում են/:

5. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2003թվականի ֆինանսատնտեսական  
գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից բաժնետերերին  
շահութաբաժիններ չվճարել:

6. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2003թվականի ֆինանսատնտեսական  
գործունեության արդյունքում ստացված 700,511,323.70 /յոթ հարյուր միլիոն հինգ  
հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր քսաներեք դրամ յոթանասուն լումա զումար  
զուտ շահույթը /հարկերի վճարումից հետո մնացած/ բաշխել հետևյալ կերպ՝.

ա/ պահուստային ֆոնդի մասհանում՝ 70,051,132.37 /յոթանասուն միլիոն  
հիսունմեկ հազար մեկ հարյուր երեսուներկու դրամ երեսունյոթ լումա.

բ/ չբաշխված շահույթ՝ 630,460,191.33 /վեց հարյուր երեսուն միլիոն չորս հարյուր  
վաթսուն հազար մեկ հարյուր իննսունմեկ դրամ երեսուներեք լումա:

7. Սահմանել, որ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության  
2003թվականի ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում կրած վնասները,  
որոնք համապատասխան ֆոնդերի /հիմնադրամների/ բացակայության պատճառով  
դուրս չեն գրվել, մարվում են զուտ շահույթի հաշվին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՐ

Կ. ՍԱՖԱՐՅԱՆ

